

գոյացության հյուսվածաբանական տեսակին, վիրահատական մեթոդի ընտրությանը, վիրաբույժի որակավորմանը, դեռահաս տարիքի աղջիկների կյանքի որակին, նրանց կրած արտասեռական հիվանդություններին, և դրանց ազդեցությանը վերարտադրողական արդյունքները կանխատեսող ձվարանային պահուստի վրա մնում են բաց: Այս համատեքստում Հասմիկ Բարեղամյանի ատենախոսական աշխատանքի արդիականությունը կասկածներ չի հարուցում:

Ատենախոսությունն ունի ավանդական կառուցվածք: Բաղկացած է ներածությունից, գրականության վերլուծական տեսությունից, հետազոտության նյութի և մեթոդների նկարագրությունից, կլինիկական խմբերի ընտրության հիմնավորումից, սեփական հետազոտության արդյունքները ներկայացնող գլխից, ամփոփումից, եզրակացություններից, գիտագործնական առաջարկություններից և գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորվում է ուսումնասիրության արդիականությունը, ներկայացվում են նպատակը և խնդիրները, քննարկվում են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները, աշխատանքի գիտական նորույթը և դրա գործնական նշանակությունը: Դրված նպատակի մեջ հստակ երևում է կապը պոստուլատների հետ, որոնցով հեղինակը հիմնավորում է ուսումնասիրության արդիականությունը: Աշխատանքի արդիականությունը որոշվում է հայ բնակչության շրջանում վերարտադրողական տարիքում ձվարանային ցածր պահուստի ռիսկի խմբին պատկանող դեռահաս տարիքի աղջիկների ձվարանային պահուստը բնութագրող ցուցանիշների հետազոտության, նրանց ընդհանուր առողջության վրա ազդող ռիսկի գործոնների վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ:

Գրականության վերլուծական տեսությունում հեղինակը ներկայացնում է ձվարանային պահուստ հասկացությունը, կարևորում դրա կլինիկական նշանակությունը, ներկայացնում ձվարանային պահուստի կենսաքիմիական գնահատման կարգը, մանրամասնում ձվարանային պահուստի նվազմանը հանգեցնող ներքին և արտաքին գործոնները: Ատենախոսը մանրամասն ներկայացնում է ձվարանի վիրահատական միջամտության և ձվարանի գոյացության՝ վերարտադրողական արդյունքների վրա ունեցած ազդեցության ժամանակակից տեսակետները: Հեղինակը կարևորում է դեռահասի դաշտանային ֆունկցիայի խանգարումների հիմքում ընկած գործոնների ուսումնասիրությունը, նկարագրում է